


THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.




ՏԵՂԵՂԵՂ ՍԻՆՏԵՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ:

ԱՂԳԱՅԻՆ, ՓՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 67

ՆԻՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՓԵՏՐՎԱՐ 18 1899

ԳԻՆ 3 ՍԷՆՑ



ՁԵՅԹՈՒՆԻ ՍԻՆՏԵՆԱԿԸ

ՁԵՅԹՈՒՆԻ ԼՈՒՐԵՐ

Ամեն կողմ կանգուններով ձիւն տեղացած է: Տարւոյ այս եղանակին մէջ Ձէյթունէն դուրս ճամբորդելն անհնարին է: Ձէյթունցիք ասկէ առջի տարիներու ձմրան օրերը կ'անցնէին ուսել խմելով եւ իրենց զիւցազնական քաջագործութիւնները իրարու պատմելով: Սակայն այս տարի թշուառութիւնը ալ աւելի սուղ կալի է, այսու հանգերձ ժողովուրդը իրարու կ'օգնէ, եւ միմիտարական է տեսնել թէ անթուրեմէն մեռնող չէ եղած ցարգ:

Ձէյթունցիները տեսնելով որ կըրօնքի վաճառական Միսիօնարները իրենց պաշտպանութեան տակ գտնուած սրբերը ազգային եկեղեցին յաճախելէ կ'արգելին, արդարացի բարկութեամբ անոնց ձեռքէն քաշած առած են որբերը, որոնք այժմ կը խնամուին սղգին ձեռամբ:

Պօլսոյ Պատրիարք Սրբազանը Ձէյթունցիներու այս ընթացքէն զոհ մընալով՝ «Օրհնութեան Կոնգակ» մը դրկած է:

Գառապեան եւ Ալարօնեան անուն գառապտուները դպրոցներու յառաջդիմութեան մասին անձնուիրարար կաշխատին, եւ դպրոցի ծախուց հաշուեկէտը 140 օսմ. լիւրայէն 200 օսմ. լիւրայի բարձրացած է:

Ձէյթունի համար նոր քահանաներ ձեռնադրուած են, որոնց անուններն են. Տ. Արսէն, Տ. Սորէն, Տ. Վահան, Տ. Եղնիկ, Տ. Մեարտակ եւ Տ. Սահակ, որք ուսեալ եւ ազնուական դասէ անձինք են:

Մեծն Ներսէսի Ողբերգութեան հետ Դերասանական Սոււրբը պիտի ներկայացնէ բոլորովին նոր կատակերգութիւն մը, որուն նմանը Հայ թեմի վրայ ներկայացուած չէ տակաւին: Պատրաստութիւններ եղած են երեկոյթը խիստ գոհացուցիչ ընելու:

Մտից գինն է 1 տոլար, 75 և 50 սէնթ. Օթեակներու իւրաքանչիւրը կ'արժէ 5 տոլար:

Հայուհեաց Որբախնամ Ընկերութիւնը Ընդունելութեան Հանդէս մը պիտի տայ՝ իւր առաջին տարեշրջանի առթիւ այս երեկոյ, Ս. Ոսկերեան Եկեղեցոյ սրահին մէջ:

Երեկոյեան յայտագիրն է ԵՐԱՃԸՏՈՒԹԻՒՆ. միեւնոյն ժամանակ Անդամուհի Տիկնանց կողմանէ պիտի վաճառուին փոքրիկ իրեղէններ՝ իւրաքանչիւրը ՈՐԲԵՐՈՒՆ:

Հրատրուած է ամեն Հայ ներկայ գտնուել: Մուտքն է 10 սէնթ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԻԳՐԻՍԻ անցեալ թւին մէջ Ըսինք թէ Մակեդոնացիք կը պատրաստուին յեղափոխութիւն յարուցանելու: Հիմա ալ լուր կայ թէ Ալպանիացիները - որոնք մահմետական են - վերին աստիճանի մոլեգնութիւնով մը գրգռուած են Պուլկարներուն վրայ յարձակելու և ջարդելու: Կատաղութիւնը այնպիսի վիճակի մը հասած է որ թուրք կառավարութիւնը ուզէ ալ կարող պիտի չըլլայ իրարանջուցներու առջեւ տանելու: Այս անգամ ալ հրատուրը Պալքանեան թերակղզիին մէջ պիտի պայթի, որը թէ ամբողջ Արևելեան խնդիրը բանալու չը ծառայէ՝ յայտնի է թէ Պալքանեան թերակղզին ալ կրէտէին բաղդին արժանացունելով վերջնականապէս պիտի անջատէ փրօտած մարմինէն:

Բանի որ թուրք կառավարութեան ներսէն հրաբուխի բորբոքումները չեն վերջացած՝ Հայերու բաղդին յեղաշրջումին յոյսը վառ պէտք է համարինք, ճիգ թափելով մէկ կողմէն մեր գոյութեան պահպանումին, ու միւս կողմէն՝ ազատութիւն սրբագրուելու արժանի ժողովուրդի մը պէս՝ պատրաստուինք ներկայանալով պատեհութիւնը ամուր մը գրկելու:

Միջնորդ մէկ կողմէն խաղաղութեան վեհաժողովին գումարումին օրը կը մտանայ, միւս կողմէն Անգղիա իր նաւային զօրութիւնը ահազատէ կ'աւելցունէ. ճիշդ հիմայ 16 առաջին կարգի մարտանաւեր եւ 26 առաջին կարգի զբազաններ կը շինուին Անգղիոյ նաւարաններու մէջ, որք քիչ աստիճանի գործունէութեան պատրաստ պիտի ըլլան: Եւրոպացի կարող քաղաքագէտ մը՝ պատմական իրողութիւններու վրայ հիմնուելով գիտել տուած է թէ՛ ամեն անգամ որ եւրոպական մեծ պատերազմներ ծագածն, անոնցմէ առաջ միշտ մէկ կամ աւելի տէրութիւն գտնուած է որ խաղաղութեան հրաւէր ուղղած է. ուստի Չարին խաղաղութեան հրաւէրը միջազգային պատերազմի մը նշանը պէտք է համարիլ:

\* \* \*

Ֆիլիպեան արշիպեղագոսը ալ եւ Ընքըլ Սամի ստացուածքն է. թէեւ Ակուրնալտօ տեղական ապստամբաց գլուխն անցած՝ անկախութեան ճիգեր կը թափէ, սակայն սպարաբուն փորձերով պարտութենէ ի պարտութիւն կերթայ. մէկ կողմէն ազատամարտական խումբեր կը լքանեն զինքը և կը միտեն ամերիկացոց բանակին միանալ, ու միւս կողմէն Չորաւար Օթիսի զօրքերը կարեւոր դիրքեր եւ ուժեր կը գրաւեն: Անցեալ Շաբաթ օր իւլայոյ բնորոշին անձնատուր եղած է: Այդ խիստ կարեւոր գրաւումին մէջ մէկ ամերիկացի զինուորի քիթը անգամ արիւնտամ չէ, մինչդեռ ապստամբները իրենց զօրաւոր բանակով մեծ կորուստ կրած ու քաղաքը կրակի տալով փախչել են. ամերիկեան զօրքերը

րը յաջողեր են կրակը շուտով մարել:

Լինքըլի ծննդեան տարեդարձին առթիւ զանազան քաղաքներու մէջ նշանաւոր ամերիկացի քաղաքագէտներ ատենախօսութիւններ ըրին, որոնց ամենն ալ նոյն ոգիէն ներշնչուած՝ քաղաքացիներ թէ Միացեալ Նահանգները սշխարհի մէջ քաղաքակրթիչի դերը ստանձնելու կոչուածն են: Փառաբանելի Անգղիոյ կատարած դերը Աւստրալոյ, Ափրիկէի, Եգիպտոսի և Հնդկաստանի մէջ. ըսին թէ իրենք ալ այդ անմահ ազգին փառասիր շաւիղներուն պարտին հետեւի և քաղաքակրթութեան կարապետ ըլլալ Քիւպայի, Փօրթօրիքոյի, Ֆիլիպեան Արշիպեղագոսի մէջ և ուր ուրքը որ առջևնին ասպարէզ մը բացուի:

Աշխարհը մեծ բան պէտք է ալքնկալէ Միացեալ Նահանգաց այս անակնկալ ու մեծ զարթումէն: Այս ազատութեան մեծագոյն և հզօրագոյն ուստանը, որ իրապէս աշխարհի ամեն ազգերէ ի մի վայր գրկատանուած է՝ չկրնար անտարբեր մնալ գերութեան շղթաներուն մէջ պրկուող իրենց մեծ մասերու ստաւապանքներուն և աղբրներուն առջև:

—Սինթեթը Սըլիվըն Նիւ Եորք նահանգի ծերակոյտին մէջ առաջարկ մը բերաւ անցեալ օր, որով մահուան պատիժը ջնջել կառավարիչ Նիւ Եորք նահանգին համար: Մերակուտականը առաջին աստիճանի (Ֆրոսթ տըլիթ) մահապարտը ցմահ, իսկ երկրորդ աստիճանիներն 30 տարի բանտարկութեան դատապարտելով բաւականանալ կուզէ:

—Կոմս Թօլսթոյ զէնընկեցութեան խնդրոյն վրայ խօսելով՝ Չարին առաջարկութիւնն անգործադրելի ներկատած է: Ի մէջ այլոց Ռուս իմաստասէրը ըսած է թէ «Անկարելի պիտի ըլլայ շախաւորել սպառազինութիւններն քանի որ ազգերը ոչ միայն նորանոր տեղեր, ինչպէս Ֆիլիպինները, Փօրթ Արթըր ևն. գրաւելու ետեւ են այժմ, այլ կը պնդեն պահել իրենքն ալ, ինչպէս Ալգաս Լօրէն, Հնդկաստան, Փօլանա ևն. »

ԹՐԿԱՊԱՆՏ ԿՂԵՐ ՄԸ

Փարիզի հայոց հոգեւոր հովիւի տիտղոսն կրող Սուքիաս վարդապետ Պարոնեան, Սուլթանի ծննդեան վերջին տարեդարձին առթիւ՝ Փարիզու Օսմ. դեսպանատան հրաւէրին վրայ, առանց տեղւոյն ազգային մարմնոց գիտակցութեան՝ դեսպանատուն կերթայ և հոն Սուլթանին կենաց կերու խումբեր, բաժակաճառեր եւ մաղթանքներ կը նէ ժամկերով: Տեղւոյն ազգայինք վարդապետի սոյն արարքէն կը զայրանան, ուսանողաց դասակարգը կ'իրաւիէ օր արտասովոր կերպով կը հաւաքուի Հայկական մատուռը եւ եկեղեցոյ աւարտումէն վերջ՝ Սուքիաս վարդապետը յանդիմանելով կը վճռուի: (Իրաւունք)

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Փարիզէն կը գրեն Իրաւունքի. «Փարիզի Հայ գաղթականութեան կողմէ 1000 Ֆրանքի արժամապատ մի շքեղ պսակ պատրաստուելով առջի օր Պատ. Պատգամաւորներու ձեռամբ հանգուցելուն տունը շրկուեցաւ ու դադարէն վրայ դրուեցաւ: Մարմինը յառաջիկայ Ուրբաթ օր (20 Յունվար) յատուկ կառավարով Աղեքսանդրիայ պիտի փոխադրուի, ընտանեկան պարագաներն ալ միասին: Խախտել հեռագրաւ ցաւակցութիւնը յայտնելէ զատ իմացուցած էր իր կառավարութեան (նախարարաց խորհրդոյ) սրտումը ու փափաքը յուղարկաւորութիւնը ի Պահլիբէ պաշտօնագէտ կատարելու համար:

Անգլիական, եգիպտական և այլ ազգերու պետական բարձր անձնաւորութեանց կողմէ բազմաթիւ հեռագրներ ուղղուած են Տիկրիս Նուպարի:

Յառաջիկայ կ'իրաւի տեղւոյս Հայկ. Մատրան մէջ մասնաւոր կարգադրութեամբ հոգեւորական պաշտօն պիտի կատարուի:

Հանգուցելոյն յաւիտենապէս կորուստը խորապէս յուզեց տեղւոյս Հայ գաղութը: Կատկազրի մասին տակաւին մի ու է խօսք չի կայ:»

ՔՈՒՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բուէարկութիւնն կը գոցուի Փեարք. 23ին, ու քուէահամարը պիտի կատարուի յաջորդ շաբթու, որոյ արգելները պիտի ծանուցանենք այս էջերու մէջ:

Բուէ կարելի է զրկել մինչև յառաջիկայ երեքշաբթի օր: Անկէ վերջ եկող քուէներն չեն ընդունուիր: Բուէաթուղթ շուկայներն կըրնան զիմեւ մեզ կամ մեր գործակալներուն:

Բուէներն պէտք է զրկել հետեւեալ հասցեով:

To the Dickris Committee, 169 E. 27th Street, New York City.

ԱՂԱՏ ԼՍՍՐԱՆ

Էլքս Հօլ. Պրօտուէլի և 27րդ փողոցի անկիւնը, Նիւ Եորք:

Այս կիրակի երեկոյ, ժամը ճիշդ 8ին Պիտի խօսի Տ. Չիթճեան:

Կարեւոր վիճարանութիւն մը տեղի պիտի ունենայ, որուն երկու կողմերը պաշտպանող յատուկ խօսողներ պատրաստուած են. նիւթն է. «Ամերիկայի Հայերն գործադու ըսթրայք» կոտորելու են երեքը:

Վարչութիւնը կարեւոր կարգադրութիւններ ըրած է, զորս պիտի հաղորդէ ժողովին:

Ժողովը պիտի սկսի ժամը ճիշդ ութնին՝ առանց սպասելու:

Փաթըրուրի Լսարանին մէջ վաղը պիտի խօսի Տ. Թ. Չարաֆճեան. նիւթ «Երիտասարդութեան պարտականութիւնները»:



ԴԱՐՁԵԱԼ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ

Բարեգործական Ընկերութեան և նորա ասանակետին մասին բնութագրող քննադատութեան հետևանքով լինելու խնդիրն առաջին հետազոտութեամբ ըստ խնդրանայ Պատ. Հայկունիի — որովհետև կը պնդէր թէ միայն ինք չէր գտնուարտելին — սա հաստատ համոզման հասցի թէ՛ Բարեգործական Ընկերութեան քայքայեալ և կազմալուծեալ վիճակին բուն պատասխանատու անձն Պատ. Հայկունին եղած է: Երբ որ և է հանրային պաշտօնեայ՝ փոխանակ միջառնակ հանուարին շահերն ինկատի ունենալու և իրեն յանձնուած պաշտօնին՝ ըստ իւր կարողութեան՝ խղճի մասօք կատարելու՝ անձնական գրծուծ խնդիրներով կը զբաղի, ինչպէս կը յուսաք որ այդպիսի անձի մը ձեռնարկած գործը յաջողութիւն գտնէ: Պատ. Հայկունի չէ աշխատած խոստացուած գրամներն գանձելու և Բարեգործական Ընկերութեան նպատակին ծառայեցնելու. գիտէ՞ք ինչու, — որպէս զի գանձին մէջ գրամ չը գտնուի, և այն պարագային որ այսինչ կամ այնինչ անձերն պաշտօնի անցնին՝ գանձին մէջ գրամ չը գտնուեն ևն: Ի՞նչ տրամաբանութիւն. Պատ. Հայկունի պաշտօնի անցած օրէն ի վեր այսպէս իւր ամբողջ ժամանակն մեքենայութիւններով անցուցած է փոխանակ գործերու. և այսօր, Բարեգործական Ընկերութեանը լոկ իւր երեւակայութեան մէջ գոյութիւն ունի: Ընկերութիւնը ո՛չ կանոնադրուելի, ո՛չ կանոնադրուող անձեր, ո՛չ գանձին մէջ գրամ և ո՛չ ալ վարչական ժողով ունեցած է՝ անցեալ Գարունէն ի վեր: Եթէ մէկը կուզէ Բարեգործական Ընկերութեան ո՛ր և ի՞նչ գործ ընելի իմանալ, պէտք է ուղղակի Պատ. Հայկունիի դիմում ընէ, որովհետև վարչութեան և խնամակալութեան անդամներն տեղեկութիւն չունին այդ մասին:

Բայց կը զարմանամ թէ այս խնդրոյն նկատմամբ այսքան գրուելէ վերէ՛ր ի՞նչ ո՞ւ վարչութեան կամ խնամակալութեան անդամներն, որոնց ամենքն ալ պատուաւոր անձնաւորութիւններ ճանչցուած են՝ հրապարակ չեն ելնիր և այս քայքայեալ վիճակին դարման մը չեն տանիր, նամանաւոր խնամակալութեան անդամ Տիար Կիւրապի Կիւրապիեանն, որ եկեղեցւոյ բնակէն խոստացած էր 100 տոյար վճարել և նոյնիսկ կրկնապատկել և եռապատկել այն գումարը, ի՞նչ պատճառաւ նոյն իսկ խոստացած գրամն չէ վճարած մինչև ցարդ: Ես այնպէս կը խորհիմ թէ նոյն իսկ այդ անձերն հաւատք չունին Պատ. Հայկունիի վարչութեան և անգամ մը որ օձիքներն ձեռք տուած են կամ իւր վարչութեան անդամ կամ խնամակալութեան, իրենք ևս չուարած են թէ ինչպէս դուրս ելնեն այս գործին մէջէն: Այս խնդրոյն կարգադրութիւնն կհնարական

կարեւորութիւն ունի գաղթականութեան համար և սրբան շուտով կարգադրուի, այնքան օգտակար է: Պատ. Հայկունի չը համարձակիր ընդհանուր ժողով մը գումարել և չեմ ալ կարծեր որ իւր գումարած ընդհանուր ժողովն կարենայ գործն կարգադրել: Բարեգործական Ընկերութեան վարչութեան և խնամակալութեան մէջ շատ մը կարող անձնաւորութիւններ կը գտնուին այս գործին կարգադրութեան ձեռնարկելու, և կարծեմ թէ բարոյական ամենամեծ պատասխանատուութեան ներքե կը գտնուին՝ ընդ փոյթ այս խնդիրն յաջող ելքի մը բերելու:

ԳՐԻԳՈՐ ԶՊՈՒՔՃԵԱՆ

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Բ Ք

Քաղաքի Թրիպիոն Լրագիրը իր փետր. 5 թուին մէջ Լօնտոնի Տէլի Երկրէն քաղուած յօդուած մը կը հրատարակէ՝ Նուպար Փաշայի վրայ: Հայ ուկանաւոր քաղաքագէտի բարեմասնութիւններն ու ընկերական ինչ ինչ սովորութիւններն պատմելէ վերջ՝ անոր յաջ և երոպական ազգաց վայելած յարգն ու արժանիքը ցոյց տալու համար կը պատմէ թէ՛ Հայկական ջարդերու ճգնաժամին ասեղները, Անգլիոյ և Եւրոպական ուրիշ երկիրներու հասարակաց կարծիքը ներկայացնող մարդիկ՝ Նուպարի թելադրեցին ու յանձն տուին պաշտօն տալ իրեն՝ միջամտելու Հայոց և անոնց հարստահարչին մէջտեղ և Հայկական ինքնօրէն կառավարութիւն մը ծրագրել՝ Եւրոպայի հովանաւորութեան տակ: Նուպար պիտի կրնար զայն յաջողցնել՝ եթէ երբէք զայն յաջողցնեն կարելի էր ո՛ր և է մարդու համար: Բայց ուրիշ խոչընդոտներ ելան, որոց վրայ գրեւն հոս՝ աւելորդ կը սեպուի:

— Թրոյի մէջ ամսոյս 2ի գիշերը տեղւոյն ճեմակեղէններու մէկ գործարանը հրոյ ճարակ եղած է. այս շէնքի երրորդ յարկը Հայոց կը վերաբերի եղեր, որք ժամանակէ մը իվեր, իրենց մեքենաներով, օդակ շինելու գործ հաստատած էին հոն: Մեր ազգայնոց փաստը 2000 տարրի չափ է կըտուի, և ամենէ աւելի վընտուող անձն է Պ. Մ. Աւագեան: 2ի գիտցուի սակայն թէ Հայք՝ իրենց գործ ազատագրած էին կանխաւ:

— Մանչեսթրէն մեր թղթակիցը կը գրէ մեզ թէ՛ Նշան Գալուստեան, որ գողութիւն ըրած ըլլաւ ամբաստանութեամբ ձերբակալուած էր, բարձրագոյն դատարանի առջև դատուելով՝ 4 տարի բանտարկութեան դատապարտուած է: Կը յիշուի անշուշտ թէ Նշանի գողցած վերարկուները Բաղէշցիի մը խանութիւն մէջ գտած էին. գողը խոստովանած ըլլալով թէ այս խանութեան վերարկուներու գողօն լինելն չէր գիտէր ըսաւ, Բաղէշցիին պատասխանատուութեանէ ազատ կը մնայ:

ՍՐԲԱԶԱՆԸ, ՏԵՐՏԵՐԸ ԵՒ ԱՊՏԱԿԸ

ՏԻԳՐԻՍԻ 56րդ թւին մէջ, իբր երեք ամիս առաջ, Պօսթոնի մեր թղթակիցը կը գրէ թէ Տ. Գասպար քահանան դիմում կընէ այդ օրեր Սարաճեան սրբազանին ու արտօնութիւն կը խնդրէ պսակ մը կատարելու համար. Սրբազանը փոխանակ հրամանագրի՝ յանդիմանալի մը կը յղէ Տէրտէրին՝ ըսելով թէ պսակի խորհուրդ կատարելու ստաշնորդին կը վերաբերէր, և ասոր հետևութիւնը սա կըլլայ թէ պսակը Բողոքական Պատուելի մը կը կատարէ:

Այս լուր ժամանակին չի հերքուեցաւ, որովհետև Սրբազանը մամուլը կարեւորութիւն չի տար եղբր. սակայն երբ Յովսէփ Եպիսկոպոսը Նիւ Եորք եկաւ, ի մէջ այրոց, Տիկին մը այս մասին բացատրութիւն կը խնդրէ Սրբազանէն. Յովսէփ Եպիսկոպոս կը խոստանայ այդ սիկնոյ սիրոյն համար՝ այդ լուրը հերքել, ուստի կը գրէ Տէրտէրին այս մասին և հետևեալ նամակը կատանայ, զոր մեզ կը դրկուի երրորդ անձի մը միջոցաւ ի հրատարակութիւն:

Յունվ. 27, Պօսթոն

Գերապատիւ Յովսէփ Եպ. Սարաճեան, Առաջնորդ Հայոց Ամերիկայի 25րդ Գերապատուութեան Յուն. 25 նամակը ստացայ և կը փութամ հաղորդել ձեր ուզած տեղեկութիւնները:

2—3 շաբաթ առաջ իսթ քիչմպարիճէն ինձ դիմեցին պսակ մը կատարելու համար. և պատասխանեցի իրենց թէ՛ ես պաշտօնապէս քահանայ կարգուած չը լինելով հոս, անոնց Առաջնորդէն հրամանի՝ չեմ կրնար պսակ ընել. դիմեցէք իրեն՝ Ուսթըր, և երբ պաշտօնական հրաման առնէք՝ սիրով կը կատարեմ իր հրամանը, որ և արդէն իմ պարտականութիւնն է: Անկից վերջ ալ չեմ կան:

Մնամ աղօթարար ԳԱՍԲԱՐ ՔԱԶԱՆԱՅ

Միւս կողմէ մեր թղթակիցը կը խոստանայ ամեն ջանք ի գործ դնել, ապացոյցներ հաւաքելով դրկել մեզ ի հաստատութիւն իր հարկաւոր լուրին, զոր ստացած է եղեր նոյն իսկ հարանեւորներէն:

Սակայն ամեն պարագայի տակ, ՏԻԳՐԻՍԻ բողոք ընկերացիներն մէկ անհատի մը շափ կարեւորութիւն չունին... Սրբազանին քով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Փետր. 7, Մանչեսթր. Անցեալ 20րեքշաբթի օր Մաշիոց վարդապետը քաղաքս եկաւ, Լուսաւորչական Հայոց անուանեցող արձանագրելու յատուկ ստամարի մը մէջ, սակայն ամենէ շիտակով լուսաւորչական հովիւ ուղղորդներուն անունը: «Տարբերութիւն չընեն, կ'ըսէր Հայր սուրբը, ի՛նչ դաւանանքի ալ պատկանին, կը բաւէ որ կուզեն լուսաւորչական կղերի հովուութիւնը», ինչպէս որ երկու բողոքական ընտանիքներ ալ արձանագրած է:

Այդ նախնական գործը աւարտելէն վերջ, յաջորդ օրը երեսփոխանի մը ընտրութեան համար սկսաւ սուրէն տուն քուէ հաւաքել. և համեմատական քուէով՝ առաւելագոյն քուէ շահողը ընտրեալ նկատուելու պայմանաւ:

Այս ձեւով քուէարկութիւն կատարուեն՝ և համեմատականով ընտրուին գէմ, բողոքեցիներ և պահանջեցիներ որ ժողով ընէ. բայց իզուր. «ստիպուած եմ այսպէս ընել» կըսէր Հայր սուրբը:

Վարդապետը մասնաւոր ջանք մը ունէր՝ քուէն՝ «տիրացու» վարժապետին — Պարոն Յ. Ի — շահեցնելու, և

ամեն տեղ շեշտած էր անոր մասին: Անշուշտ նկատուաներ ունէր երիտասարդ կղերը:

Հինգշաբթի երեկոյ քուէները հաւաքելէն յետոյ, կերթայ բողոքականի մը առն, հոն ալ խնդրու կը յայտնէ. անոնք բացէ իրաց կը յայտարարեն բողոքական լինելին. «Հոգ չէ, կըսէ հայր սուրբը եթէ կուզէք լուսաւորչական եկեղեցականի հովուութիւն, և անոնք ալ կ'արձանագրէ:

26 արձանագրուած անուններէն 22 քուէ առած ըլլալով, — 4 հոգի կին դասակարգ — կը բանայ գանձը, և ամենէ մեծ թիւը 6 քուէ կըլլայ, և շահողը Տ. Յ. Քիչնտրեանը:

Համեմատականի ձեւով քիչնտրեանը Մանչեսթրի երեսփոխանն էր ալ ևս. բայց ոչ. խնդրու կը փոխուի. վարդապետին սիրած «տիրացու» չէ կրցած շահիլ երեսփոխանութիւնը. ուստի ժողով գումարել, և մեծամասնութեան քուէով ընտրել կորուշէ կրօնի զինուորը՝ ի հարկէ տիրացուին համար նոր ջանքեր ընելու մտքով:

Բան մը չէ, աչք կապուկ մը միայն... խեղճ ժողովուրդ...

ՍՐԻՆԳ

ԿԱՍ

ՆՈՐ ԵՐԳՍՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ

Մեկուս Մարգարեան — Հրատարակիչ, Այս երգարանը պիտի պարունակէ առնուազն 300 երեսներ՝ հին և նոր նշանաւոր անձանց ու բանաստեղծներու պատկերներէն զատ: Գրքին մէկ երրորդ մասը պատրաստ է արդէն. և մէկ մասին համար ալ պաշար ունինք այժմ. մնացեալին համար դիմում կընենք հասարակութեան՝ ազաչելով որ հոնին մեզ լրկել երգեր ու բանաստեղծութիւններ, որք կարժեն այսպիսի հատորի մը մէջ ունենալ: Մեր բանաստեղծներէ կը խնդրուի գրել այս նոր երգարանի համար բանաստեղծութիւններ բարեկեղեցանի, հարանիքի, ուրախութեան, կոչուանքի ու երեկոյթներու յարմարութեան վրայ: Յարմար սեպուածները պիտի ձայնագրուին ու հեղինակները պիտի վարձատրուին մեր կողմէ: Գրել Տիգրիսի խմբագրութեան:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՄ

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

Ա. Գրքաւրը զգեանի

Թիւ 313 իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք Պատիւ ունի ծանուցանել թէ սա խանութը բացուցաւ շաբթուս մէջ՝ տեղական և արեւելեան ամէն տեսակ նպարեղէններով: Ապրանայ թարմ լինելն ու գներու չափաւորութիւնը ծանուցանելու համար կը հրաւիրուին հայերն գէթ միանգամ փորձել. մէկ փորձը բաւական է յաճախորդը մը ընտանեական ընելու:

Մէկ գլին, աման գլին. քիչ շահ, շատ առևտուր: Սա է մեր նշանաբան:

ՆԵՐՍԵՍ Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԵՒ ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒԽՄԱՆԱՆ

20½ Հըսուրն փողոց, Պօսթըն, Մասս. Միակ Հայ նպարավաճառ ի Պօսթըն ի գիտութիւն Պօսթընի և շրջակայի հայերուն կը յայտարարենք թէ նպարեղէններու նոր խանութ մը բացած ենք. ուր կը գտնուի ամեն տեսակ ընտիր նպարեղէններ. օրինակ. պուլուր, ծեծած, ոսպ, սիսեռ, պամեայ, արեւելեան ձեւով աղցուած սուրճ (խահուէ), խոյսերի պատարմայ, եսփրախ և այլն և այլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշդիւ կը կատարուին՝ գոհացուցիչ գներով: Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Կը վաճառեն նաեւ Բաֆֆի գործերը իրենց սովորական գներով: 12—3

Ք Ո Ւ Է Ա Թ Ո Ւ Ղ Թ 1899

Ստորագրեալը՝ նախանձանդիր գաւակ Հայ. Սուրբ Եկեղեցւոյ, ԿՈՒԶԵՄ ԶԵՄ ՈՒԶԵՐ | որ Գերապատիւ Յովսէփ Եպիսկոպոս Սարաճեան Ամերիկայի Հայոց Ընդհանուր Առաջնորդ մնայ:

- Անուն .....
- Մականուն .....
- Տարիք .....
- Ծննդավայր .....
- Հասցէ .....

